ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԲՄԱՊՁԲ-21-20/3-1

ք. Երևան «10».09.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ռեմարկ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Դ. Իսրայելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի առավելագույն գինը կազմում 86 000 000 (ութսունվեց միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ:

Մատակարարված պահեստամասերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է 24848762 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն.

ՆԳ-ն պահեստամասերի մատակարարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է 38826190 ՀՀ դրամ

ՄԳ/ՆԳ – բանաձևով սահմանված գործակից՝ 0.64.

Ծ-ն առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատակարարված պահեստամասերի քանակն է:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռեմարկ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Մելքումով փ., շ. 11, բն.31
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արցախբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 22323003752300
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01261083
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ա. ՅՈԼՉՅԱՆ	Դ. ԻՍՈՅԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ՀԲՄԱՊՁԲ-21-20/3-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անվանումը	CPV կոդը	Չափի միավորը
Զանազան պահեստամասեր (Միջին արտադրողականության բուլդոզերների վերանորոգման պահեստամասեր)	34911150/2	Դրամ

Այդ թվում

Հ/Հ	Անվանումը	Կատալոգային համարը	Չափի միավորը
1	Գլանների բլոկի գլխիկ	51-02-3ՍՊ	հատ
2	Գլանների գլխիկի միջադիր	51-02-Ս13Վ	հատ
3	Գլանների գլխիկի միջադիր	51-02-107-01ՍՊ	հատ
4	Ծնկաձև լիսեռ	16-03-126ՍՊ	հատ
5	Ծնկաձև լիսեռ	16-03-112ՍՊ	հատ
6	Կարտեր առջևի	51-01-156ՍՊ	հատ
7	Կարտեր հետևի	51-01-36-01	հատ
8	Պարկուճ Ֆ-145	01466-2-01	հատ
9	Պարկուճ Ֆ-150	51-01-82	հատ
10	Պարկուճի ռետինե խցուկ (8 հատ)	40210-02	լրկզմ
11	Պարկուճի պղնձյա միջադիր	40201	հատ
12	Մխոց Ֆ-145	51-03-23	հատ
13	Մխոց Ֆ-150	51-03-40	հատ
14	Մխոցի օղ Ֆ-145	US51-03-115ՍՊ	լրկզմ
15	Մխոցի օղ Ֆ-150	51-03-122	լրկզմ
16	Ներդրակ արմատական	Ա-23.01-103-160սբՍ	լրկզմ
17	Ներդրակ շարժաթևի	Ա-23.01-100-160սբՍ	լրկզմ
18	Շարժաթև	51-03-112ՍՊ	հատ
19	Մանժետ 1,2-200x240-1 Բ-10	ԳՕՍՏ 8752-79	հատ
20	Յուղի պոմպ	29-09-124ՍՊ	հատ
21	Յուղի պոմպ	51-09-217ՍՊ	հատ
22	Վառելիքի պոմպի կարգավորիչ	51-06-14ՍՊ	լրկզմ
23	Վառելիքի պոմպի կարգավորիչ	51-06-14-01ՍՊ	լրկզմ
24	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	51-67-24ՍՊ	հատ
25	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	51-67-9ՍՊ	հատ
26	Բոցամուղ	14-69-117-ՍՊ	հատ
27	Ջրի պոմպ	16-08-140ՍՊ	հատ
28	Ջրի կոլեկտոր	51-08-27	հատ
29	Ներթորող կոլեկտոր	51-05-299ՍՊ	հատ
30	Արտաթորող կոլեկտոր	51-05-313	հատ
31	Արտաթորող կոլեկտոր	51-05-345	հատ
32	Տուրբոճնշակ	92.000-06 (ՏԿՌ-11Ն3)	հատ
33	Տուրբոճնշակ	51-54-1-01ՍՊ (ՏԿՌ8,53)	հատ
34	Տուրբոճնշակի յուղի ֆիլտր	2105-1012005-04	հատ
35	Յուղի ազդանշանային տվիչ	65-09-132ՍՊ	հատ
36	Ջրի ռադիատոր	Դ180-1301010	լրկզմ

37	Ջրի ռադիատոր	64-08-320.Կ	լրկզմ
38	Ջրի ռադիատորի միջուկ	130ՈՒ.13.020-1	հատ
39	Ռադիատորի կարճախողովակ	42701	լրկզմ
40	Յուղի ռադիատոր	ՏԳՍ 100.1013.4000Մ (700-04-816ՍՊ)	հատ
41	Յուղի ռադիատոր	130ՈՒ.09.012	հատ
42	Հովհար	65-07-103ՍՊ	հատ
43	Գեներատոր	5201,3771-10 (28վոլտ, 1000վատ)	հատ
44	Գեներատոր	966.3701(14վոլտ, 1000վատ)	հատ
45	Ջրի շապիկի օղ (ռետինե)	40843	լրկզմ
46	Ջրի շապիկի խողովակ (պղնձյա)	02218	հատ
47	Փոկ հովհարի	11x16x1650	հատ
48	Փոկ հովհարի ՅԱՄՋ	11x16x1250	հատ
49	Փոկ գեներատորի	11x12.5x1090	հատ
50	Փոկ գեներատորի ՅԱՄՋ	11x16x970	հատ
51	Կափույրի կափարիչի ներդիր	700-40-2896	հատ
52	Կարտերի միջադիր	700-40-4947	լրկզմ
53	Կարտերի խցան	65-01-101ՍՊ	հատ
54	Շարժիչի միջադիրների լրակազմ	Ռ/կ Դ-160	հատ
55	Վառելանութի զտիչ տարր	51-70-146ՍՊ	հատ
56	Յուղի զտիչ տարր	50-26-490 ՍՊ	հատ
57	Օդի զտիչ տարր	Ա41.10.000-02	լրկզմ
58	Թափանիվի պատյան	16-01-97-01	հատ
59	Կցորդիչի պատյան	50-15-156ՍՊ	հատ
60	Թափանիվի լրակազմ	18-14-4ՍՊ կամ 20-14-4ՍՊ	լրկզմ
61	Թափանիվ (կցաշուրթով)	16-03-111ՍՊ	լրկզմ
62	Կցորդիչի սեղվովի սկավառակ	50-14-64	լրկզմ
63	Տարվող կցորդիչի սկավառակ	18-14-135ՍՊ	հատ
64	Տանող կցորդիչի սկավառակ	18-14-44	հատ
65	Ղեկավարման մեխանիզմ	50-13-5ՍՊ	հատ
66	Կցորդիչի սերվոմեխանիզմ	50-15-118ՍՊ	հատ
67	Կարդանային լիսեռ	18-14-77-1	հատ
68	Կարդանային լիսեռի կցորդիչ	20-14-23	հատ
69	Գործարկիչ շարժիչ	ՊԴ-23	հատ
70	ՊԴ-23-ի բլոկ-կարտեր	17-01-165ՍՊ	լրկզմ
71	ՊԴ-23-ի կոլեկտոր	17-05-175	հատ
72	ՊԴ-23-ի բլոկի գլխիկ	022 40-01	հատ
73	ՊԴ-23-ի բլոկի գլխիկի միջադիր	700-40-20006ՍՊ	հատ
74	ՊԴ-23-ի ծնկաձև լիսեռ իր խցողակով	3341 (40301,1.2-55x80.1,17-03-23)	լրկզմ
75	ՊԴ-23-ի մխոց	17.03.2023	հատ
76	ՊԴ-23-ի մխոցի օղ	03712ՍՊ	լրկզմ
77	ՊԴ-23-ի շարժաթև	03427ՍՊ	հատ
78	ՊԴ-23-ի շարժաթևի ներդրակ	Ա23.01-5404Ա	լրկզմ
79	ՊԴ-23-ի ծնկաձև լիսեռի դիմացի առանցքակալ	210ԱԿ	հատ
80	ՊԴ-23-ի ծնկաձև լիսեռի դիմացի ժանանիվ	3356	հատ
81	ՊԴ-23-ի ծնկաձև լիսեռի հետևի առանցքակալ	211ԱԿ	հատ
82	ՊԴ-23-ի թափանիվի ատամնանիվ	17-03-3	հատ
83	ՊԴ-23-ի կցորդիչի հավաքակազմ	17-73-7ՍՊ	լրկզմ

84	ՊԴ-23-ի ռեդուկտորի հավաքակազմ	17-76-8ՍՊ	լրկզմ
85	ՊԴ-23-ի սկավառակ	17-73-139ՍՊ	հատ
86	ՊԴ-23-ի շղթայակցման կցորդիչ	17-73-54	հատ
87	ՊԴ-23-ի շղթայակցման կցորդիչի խաչուկ	17-73-57	հատ
88	ՊԴ-23-ի ռեդուկտորի կցորդիչ	17-76-36	հատ
89	ՊԴ-23-ի ռեդուկտորի կցորդիչի դիմացի ժանանիվ	72104	հատ
90	ՊԴ-23-ի կարբյուրատոր	Կ-125LS	հատ
91	ՊԴ-23-ի մագնետո	Մ-149Ա1-3728 000	հատ
92	ՊԴ-23-ի մեկնարկիչ	42.3708.000	հատ
93	ՊԴ-23-ի միջադիրների լրակազմ	Ռ/կ ՊԴ-23	հատ
94	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	50-12-246ՍՊ	լրկզմ
95	Փոխանցման տուփի ներքևի լիսերի հավաքակազմ	50-12-224ՍՊ	լրկզմ
96	Փոխանցման տուփի առաջին միջանկյալ լիսերի հավաքակազմ	50-12-230ՍՊ	լրկզմ
97	Փոխանցման տուփի երկրորդ միջանկյալ լիսերի հավաքակազմ	50-12-247ՍՊ	լրկզմ
98	Փոխանցման տուփի առաջ-հետ ժանանիվ	50-12-642	հատ
99	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	18-12-132	լրկզմ
100	Փոխանցման տուփի ներքևի լիսերի հավաքակազմ	18-12-156	լրկզմ
101	Փոխանցման տուփի առաջին միջանկյալ լիսերի հավաքակազմ	18-12-261	լրկզմ
102	Փոխանցման տուփի երկրորդ միջանկյալ լիսերի հավաքակազմ	18-44-27	լրկզմ
103	Փոխանցման տուփի առաջ-հետ ժանանիվ	18-12-320	հատ
104	Փոխանցումների փոխարկման երկժանի (դարձիչ)	50-12-565	հատ
105	Փոխանցման տուփի նորոգման լրակազմ	1303	հատ
106	Սերվոմեխանիզմ	21-17-4ՍՊ	հատ
107	Դարձիչի մատ	50-12-682	հատ
108	Դարձիչի մատ	50-12-566	հատ
109	Դիֆերենցյալի ժանանիվ	16354	հատ
110	Դիֆերենցյալի լիսեռ	24-16-1	հատ
111	Կցաշուրթ /ֆլանեց/	50-19-144	հատ
112	Կցաշուրթ /ֆլանեց/	24-19-30	հատ
113	Արգելակման թմբուկ	28-16-15	հատ
114	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի)	24-16-103ՍՊ	հատ
115	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի) մետաղակ.	16121	հատ
116	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	24-19-35	հատ
117	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ	24-19-36	հատ
118	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	50-19-141	հատ
119	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ	50-19-142	հատ
120	Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ	01-05-111	հատ
121	Անվակունդ	50-19-145ՍՊ	հատ
122	Անվակունդ	24-19-118ՍՊ	հատ
123	Կիսասռնի	24-19-37	հատ
124	Տանող անիվ սեգմենտով	50-19-182 ՍՊ	հատ
125	Տանող անիվ	59-19-160	հատ
126	Տանող անիվ	50-19-99	հատ
127	Տանող անիվի գամասեղների հավաքակազմ	700-29-2369,18-19-19,700-30-2047	լրկզմ
128	Տանող անիվի հեղյուս և մանեկ	Մ20x1,5-62	հատ
129	Վերջնամասի առանցքակալ ձախ	21-19-1	հատ
130	Վերջնամասի առանցքակալ աջ	21-19-2	հատ

131	Անվակունդի ժանանիվ	60-19-1	հատ
132	Անվակունդի ժանանիվի պսակ	60-19-2	հատ
133	Անվակունդի ժանանիվի	19216	հատ
134	Անվակունդի առանցքակալ	2224ԿՄ	հատ
135	Անվակունդի առանցքակալ	228Ա	հատ
136	Անվակունդի առանցքակալ	70-2228ԿՄ	հատ
137	Մակաբուծային ժանանիվ	50-19-150	հատ
138	Մակաբուծային ժանանիվի առանցքակալի պատյան-փակաղակ	50-19-147	հատ
139	Մակաբուծային ժանանիվի առանցքակալի պատյան	50-19-146	հատ
140	Մակաբուծային ժանանիվի մանժետ	2.2-100x125-1	հատ
141	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-32612Կ1Մ	հատ
142	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-32315Կ1Մ	հատ
143	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	118	հատ
144	Մակաբուծային ժանանիվ	24-19-29	հատ
145	Մակաբուծային ժանանիվի առանցքակալի պատյան	24-19-31	հատ
146	Մակաբուծային ժանանիվի մանժետ	46709	հատ
147	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-42314ԿՄ	հատ
148	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-42315ԿՄ	հատ
149	Երկժանանիվի լիսեռ	50-19-148	հատ
150	Երկժանանիվի ժանանիվ	50-19-149	հատ
151	Երկժանանիվի միջուկ և մանեկ	50-19-157	հատ
152	Երկժանանիվի առանցքակալի պատյան	50-19-145	հատ
153	Երկժանանիվի առանցքակալի փակաղակ	50-19-156	հատ
154	Երկժանանիվի միջուկի առանցքակալ	213	հատ
155	Երկժանանիվի առանցքակալ	70-32417Մ	հատ
156	Երկժանանիվի առանցքակալ	70-32612Կ	հատ
157	Երկժանանիվ	20-19-24	հատ
158	Երկժանանիվի առանցքակալի պատյան	24-19-38	հատ
159	Երկժանանիվի առանցքակալ	70-42612Կ	հատ
160	Երկժանանիվի առանցքակալ	70-42415ԿՄ	հատ
161	Թրթուրի հավաքակազմ (1 կողմը)	ՉԴ-50-22-9ՍԲ	լրկզմ
162	Թրթուր	50-22-2	հատ
163	Թրթուրի հեղույս և մանեկ	Մ20x1,5x62/30326-1	լրկզմ
164	Թրթուրի ձգման մեխանիզմ	50-21-420ՍՊ	հատ
165	Թրթուրի ձգման մեխանիզմի փական	50-21-177ՍՊ	հատ
166	Գլդոն երկկողապատ	24-21-170ՍՊ	հատ
167	Գլդոն միակողապատ	24-21-169ՍՊ	հատ
168	Օժանդակիչ գլդոն	50-21-416ՍՊ	հատ
169	Օժանդակիչ գլդոն	24-21-171ՍՊ	հատ
170	Ձգիչ անիվ (ձախ)	50-21-305-05ՍՊ	լրկզմ
171	Ձգիչ անիվ (աջ)	50-21-306-05ՍՊ	լրկզմ
172	Ձգիչ անիվ	24-21-146ՍՊ	լրկզմ
173	Թերթիկավոր զսպան	50-20-103ՍՊ	հատ
174	Հենակային զսպան	50-20-125ՍՊ	հատ
175	Հարթաշերեփ	80-52-19-06ՍՊ	լրկզմ
176	Կողային դանակ (ձախ)	80-52-111-02	հատ
177	Կողային դանակ (աջ)	80-52-112-02	հատ
178	Միջնամասի դանակ	70-52-13	հատ
179	Միջնամասի դանակի հեղույս և մանեկ	700-28-2492,3013 (Մ-24)	լրկզմ
180	Կողային դանակի հեղույս և մանեկ	700-28-2517,3015 (Մ-27)	լրկզմ
181	Հարթաշերեփի հիդրոգլան	131-26-108-02ՍՊ	հատ

182	Հարթաշերեփի հիդրոգլան	50-26-570ՍՊ	հատ
183	Հարթաշերեփի շեղաձոման հիդրոգլան	50-50-221ՍՊ	հատ
184	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 131-26-108-02	լրկզմ
185	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 50-26-570	լրկզմ
186	Շեղաձոման հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 50-50-226	լրկզմ
187	Փխրեցուցիչի կանգնակ	50-50-104ՍՊ	լրկզմ
188	Փխրեցուցիչի հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 50-50-225	լրկզմ
189	Խցիկի ապակիներ	50-59-77-11ՍՊ խցիկի (9հատ)	լրկզմ
190	Խցիկի ապակիներ	24-59-5ՍՊ խցիկի (9հատ)	լրկզմ
191	Նստարան	50-23-200ՍՊ	լրկզմ
192	Մոտոժամի ցուցիչ	16-72-1ՍՊ	հատ
193	Մոտոժամի ցուցիչ	ՏԽԱ 3,1-11ՌԻՎՊ,45 3813 001-11	հատ
194	Վառելիքի զտիչ (ՅԱՄԶ)	1117	հատ
195	Յուղի զտիչ (ՅԱՄԶ)	5103	հատ

Ծանոթություն՝

- բոլոր պահեստամասերը պետք է հանձնվեն ԻԶՎ կենտրոնական պահեստ, որը գտնվում է ք. Էջմիածին Իսի-Լե-Մուլինոյի փողոց 7,
- ցանկում նշված պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված և պիտանելիությունը երաշխավորվի մատակարարի կողմից,
- ձեռք բերվող պահեստամասերի քանակները կկանոնակարգվեն ՀՀ ՋՈՒ ԻԶՎ կողմից տրվող հայտերով, որոնք մատակարարի կողմից համաձայն հայտերի կտրամադրվեն պահանջ ներկայացնելուց 20-օրյա ժամկետում,
- պահեստամասերը ըստ իրենց տեխնիկական պայմանների պետք է ունենան համապատասխան գործարանային փաթեթավորում:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռեմարկ» ՍՊԸ
տնօրեն

Դ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակը	Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
					4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.11.2021թ.
1	Զանազան պահեստամասեր (Միջին արտադրողականության բուլդոզերների ի վերանորոգման պահեստամասեր)	դրամ	1	86000000	86000000

Ծանոթություն՝ մատակարարման վայրը ք. Երևան, Բագրևանդի 5:

Այդ թվում

Հ/Հ	Անվանումը	Կատալոգային համարը	Չափի միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	Գլանների բլոկի գլխիկ	51-02-3ՍՊ	հատ	550000
2	Գլանների գլխիկի միջադիր	51-02-U13Վ	հատ	6000
3	Գլանների գլխիկի միջադիր	51-02-107-01ՍՊ	հատ	7000
4	Ծնկաձև լիսեռ	16-03-126ՍՊ	հատ	2192400
5	Ծնկաձև լիսեռ	16-03-112ՍՊ	հատ	2114000
6	Կարտեր առջևի	51-01-156ՍՊ	հատ	395000
7	Կարտեր հետևի	51-01-36-01	հատ	372000
8	Պարկուճ Ֆ-145	01466-2-01	հատ	37000
9	Պարկուճ Ֆ-150	51-01-82	հատ	40000
10	Պարկուճի ռետինե խցուկ (8 հատ)	40210-02	լրկզմ	4000
11	Պարկուճի պղնձյա միջադիր	40201	հատ	2000
12	Մխոց Ֆ-145	51-03-23	հատ	26000
13	Մխոց Ֆ-150	51-03-40	հատ	40000
14	Մխոցի օղ Ֆ-145	US51-03-115ՍՊ	լրկզմ	50000
15	Մխոցի օղ Ֆ-150	51-03-122	լրկզմ	60000
16	Ներդրակ արմատական	Ա-23.01-103-160սբՍ	լրկզմ	25000
17	Ներդրակ շարժաթևի	Ա-23.01-100-160սբՍ	լրկզմ	27000
18	Շարժաթև	51-03-112ՍՊ	հատ	65250
19	Մանժետ 1,2-200x240-1 Բ-10	ԳՕՍՏ 8752-79	հատ	6000
20	Յուղի պոմպ	29-09-124ՍՊ	հատ	135000
21	Յուղի պոմպ	51-09-217ՍՊ	հատ	165000
22	Վառելիքի պոմպի կարգավորիչ	51-06-14ՍՊ	լրկզմ	400000
23	Վառելիքի պոմպի կարգավորիչ	51-06-14-01ՍՊ	լրկզմ	495000
24	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	51-67-24ՍՊ	հատ	320000
25	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	51-67-9ՍՊ	հատ	320000
26	Բոցամուղ	14-69-117-ՍՊ	հատ	38000
27	Ջրի պոմպ	16-08-140ՍՊ	հատ	132000
28	Ջրի կոլեկտոր	51-08-27	հատ	45600
29	Ներթորող կոլեկտոր	51-05-299ՍՊ	հատ	45900
30	Արտաթորող կոլեկտոր	51-05-313	հատ	128900
31	Արտաթորող կոլեկտոր	51-05-345	հատ	83300

32	Տուրբոճնշակ	92.000-06 (ՏԿՌ 11Ն3)	հատ	195000
33	Տուրբոճնշակ	51-54-1-01ՍՊ (ՏԿՌ8,5Ց)	հատ	225000
34	Տուրբոճնշակի յուղի ֆիլտր	2105-1012005-04	հատ	5500
35	Յուղի ազդանշանային տվիչ	65-09-132ՍՊ	հատ	10000
36	Ջրի ռադիատոր	Դ180-1301010	լրկզմ	610000
37	Ջրի ռադիատոր	64-08-320.Կ	լրկզմ	650000
38	Ջրի ռադիատորի միջուկ	130ՈՒ.13.020-1	հատ	381000
39	Ռադիատորի կարճախողովակ	42701	լրկզմ	12000
40	Յուղի ռադիատոր	ՏԳՍ 100.1013.4000Մ (700-04-816ՍՊ)	հատ	135000
41	Յուղի ռադիատոր	130ՈՒ.09.012	հատ	95000
42	Հովհար	65-07-103ՍՊ	հատ	76000
43	Գեներատոր	5201,3771-10 (28վոլտ, 1000վատ)	հատ	78000
44	Գեներատոր	966.3701(14վոլտ, 1000վատ)	հատ	72000
45	Ջրի շապիկի օղ (ռետինե)	40843	լրկզմ	8000
46	Ջրի շապիկի խողովակ (պղնձյա)	02218	հատ	1000
47	Փոկ հովհարի	11x16x1650	հատ	4500
48	Փոկ հովհարի ՅԱՄԶ	11x16x1250	հատ	4000
49	Փոկ գեներատորի	11x12.5x1090	հատ	1500
50	Փոկ գեներատորի ՅԱՄԶ	11x16x970	հատ	3000
51	Կափույրի կափարիչի ներդիր	700-40-2896	հատ	3000
52	Կարտերի միջադիր	700-40-4947	լրկզմ	8000
53	Կարտերի խցան	65-01-101ՍՊ	հատ	16000
54	Շարժիչի միջադիրների լրակազմ	Ռ/կ Դ-160	հատ	44100
55	Վառելանութի զտիչ տարր	51-70-146ՍՊ	հատ	2000
56	Յուղի զտիչ տարր	50-26-490 ՍՊ	հատ	2800
57	Օդի զտիչ տարր	Ա41.10.000-02	լրկզմ	8000
58	Թափանիվի պատյան	16-01-97-01	հատ	226800
59	Կցորդիչի պատյան	50-15-156ՍՊ	հատ	270000
60	Թափանիվի լրակազմ	18-14-4ՍՊ կամ 20-14-4ՍՊ	լրկզմ	600000
61	Թափանիվ (կցաշուրթով)	16-03-111ՍՊ	լրկզմ	250500
62	Կցորդիչի սեղվովի սկավառակ	50-14-64	լրկզմ	38400
63	Տարվող կցորդիչի սկավառակ	18-14-135ՍՊ	հատ	39000
64	Տանող կցորդիչի սկավառակ	18-14-44	հատ	36300
65	Ղեկավարման մեխանիզմ	50-13-5ՍՊ	հատ	230000
66	Կցորդիչի սերվոմեխանիզմ	50-15-118ՍՊ	հատ	165000
67	Կարդանային լիսեռ	18-14-77-1	հատ	65000
68	Կարդանային լիսեռի կցորդիչ	20-14-23	հատ	70000
69	Գործարկիչ շարժիչ	ՊԴ-23	հատ	2400000
70	ՊԴ-23-ի բլոկ-կարտեր	17-01-165ՍՊ	լրկզմ	325000
71	ՊԴ-23-ի կոլեկտոր	17-05-175	հատ	70000
72	ՊԴ-23-ի բլոկի գլխիկ	022 40-01	հատ	65000
73	ՊԴ-23-ի բլոկի գլխիկի միջադիր	700-40-20006ՍՊ	հատ	3500
74	ՊԴ-23-ի ծնկաձև լիսեռ իր խցողակով	3341 (40301,1.2-55x80.1,17-03-23)	լրկզմ	152000
75	ՊԴ-23-ի մխոց	17.03.2023	հատ	10000
76	ՊԴ-23-ի մխոցի օղ	03712ՍՊ	լրկզմ	10000

77	ՊԴ-23-ի շարժաթև	03427ՍՊ	հատ	25000
78	ՊԴ-23-ի շարժաթևի ներդրակ	Ա23.01-5404Ա	լրկզմ	10000
79	ՊԴ-23-ի ծնկածև լիսեռի դիմացի առանցքակալ	210ԱԿ	հատ	3000
80	ՊԴ-23-ի ծնկածև լիսեռի դիմացի ժանանիվ	3356	հատ	8000
81	ՊԴ-23-ի ծնկածև լիսեռի հետևի առանցքակալ	211ԱԿ	հատ	3400
82	ՊԴ-23-ի թափանիվի ատամնանիվ	17-03-3	հատ	10300
83	ՊԴ-23-իկցորդիչի հավաքակազմ	17-73-7ՍՊ	լրկզմ	172260
84	ՊԴ-23-ի ռեդուկտորի հավաքակազմ	17-76-8ՍՊ	լրկզմ	275000
85	ՊԴ-23-ի սկավառակ	17-73-139ՍՊ	հատ	6000
86	ՊԴ-23-ի շղթայակցման կցորդիչ	17-73-54	հատ	8000
87	ՊԴ-23-ի շղթայակցման կցորդիչի խաչուկ	17-73-57	հատ	23300
88	ՊԴ-23-ի ռեդուկտորի կցորդիչ	17-76-36	հատ	15000
89	ՊԴ-23-ի ռեդուկտորի կցորդիչի դիմացի ժանանիվ	72104	հատ	6640
90	ՊԴ-23-ի կարբյուրատոր	Կ-125LS	հատ	65000
91	ՊԴ-23-ի մագնետո	Մ-149Ա1-3728 000	հատ	90000
92	ՊԴ-23-ի մեկնարկիչ	42.3708.000	հատ	70000
93	ՊԴ-23-ի միջադիրների լրակազմ	Ռ/կ ՊԴ-23	հատ	14500
94	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	50-12-246ՍՊ	լրկզմ	275000
95	Փոխանցման տուփի ներքևի լիսերի հավաքակազմ	50-12-224ՍՊ	լրկզմ	260000
96	Փոխանցման տուփի առաջին միջանկյալ լիսերի հավաքակազմ	50-12-230ՍՊ	լրկզմ	240000
97	Փոխանցման տուփի երկրորդ միջանկյալ լիսերի հավաքակազմ	50-12-247ՍՊ	լրկզմ	195000
98	Փոխանցման տուփի առաջ-հետ ժանանիվ	50-12-642	հատ	43060
99	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	18-12-132	լրկզմ	295000
100	Փոխանցման տուփի ներքևի լիսերի հավաքակազմ	18-12-156	լրկզմ	254470
101	Փոխանցման տուփի առաջին միջանկյալ լիսերի հավաքակազմ	18-12-261	լրկզմ	296000
102	Փոխանցման տուփի երկրորդ միջանկյալ լիսերի հավաքակազմ	18-44-27	լրկզմ	66030
103	Փոխանցման տուփի առաջ-հետ ժանանիվ	18-12-320	հատ	27600
104	Փոխանցումների փոխարկման երկժանի (դարձիչ)	50-12-565	հատ	48000
105	Փոխանցման տուփի նորոգման լրակազմ	1303	հատ	20000
106	Սերվոմեխանիզմ	21-17-4ՍՊ	հատ	242700
107	Դարձիչի մատ	50-12-682	հատ	72540
108	Դարձիչի մատ	50-12-566	հատ	67760
109	Դիֆերենցյալի ժանանիվ	16354	հատ	80300
110	Դիֆերենցյալի լիսեռ	24-16-1	հատ	29700
111	Կցաշուրթ /ֆլանեց/	50-19-144	հատ	81100
112	Կցաշուրթ /ֆլանեց/	24-19-30	հատ	65000
113	Արգելակման թմբուկ	28-16-15	հատ	90000
114	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի)	24-16-103ՍՊ	հատ	9000
115	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի) մետաղակ.	16121	հատ	9000
116	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	24-19-35	հատ	480000
117	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ	24-19-36	հատ	480000
118	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	50-19-141	հատ	225000
119	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ	50-19-142	հատ	225000
120	Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ	01-05-111	հատ	21000

121	Անվակունդ	50-19-145ՍՊ	հատ	350000
122	Անվակունդ	24-19-118ՍՊ	հատ	315800
123	Կիսասոնի	24-19-37	հատ	163100
124	Տանող անիվ սեգմենտով	50-19-182 ՍՊ	հատ	425000
125	Տանող անիվ	59-19-160	հատ	330000
126	Տանող անիվ	50-19-99	հատ	300000
127	Տանող անիվի գամասեղների հավաքակազմ	700-29-2369,18-19-19,700-30-2047	լրկզմ	10500
128	Տանող անիվի հեղյուս և մանեկ	Մ20x1,5-62	հատ	1600
129	Վերջնամասի առանցքակալ ձախ	21-19-1	հատ	58700
130	Վերջնամասի առանցքակալ աջ	21-19-2	հատ	58700
131	Անվակունդի ժանանիվ	60-19-1	հատ	208800
132	Անվակունդի ժանանիվի պսակ	60-19-2	հատ	71100
133	Անվակունդի ժանանիվի	19216	հատ	156600
134	Անվակունդի առանցքակալ	2224ԿՄ	հատ	40000
135	Անվակունդի առանցքակալ	228Ա	հատ	42000
136	Անվակունդի առանցքակալ	70-2228ԿՄ	հատ	48200
137	Մակաբուծային ժանանիվ	50-19-150	հատ	145000
138	Մակաբուծային ժանանիվի առանցքակալի պատյան-փակաղակ	50-19-147	հատ	26300
139	Մակաբուծային ժանանիվի առանցքակալի պատյան	50-19-146	հատ	14500
140	Մակաբուծային ժանանիվի մանժետ	2.2-100x125-1	հատ	1200
141	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-32612Կ1Մ	հատ	25000
142	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-32315Կ1Մ	հատ	26000
143	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	118	հատ	8000
144	Մակաբուծային ժանանիվ	24-19-29	հատ	43000
145	Մակաբուծային ժանանիվի առանցքակալի պատյան	24-19-31	հատ	16400
146	Մակաբուծային ժանանիվի մանժետ	46709	հատ	1500
147	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-42314ԿՄ	հատ	24000
148	Մակաբուծային ժանանիվի առանցքակալ	70-42315ԿՄ	հատ	21700
149	Երկժանանիվի լիսեռ	50-19-148	հատ	170470
150	Երկժանանիվի ժանանիվ	50-19-149	հատ	170470
151	Երկժանանիվի միջուկ և մանեկ	50-19-157	հատ	5750
152	Երկժանանիվի առանցքակալի պատյան	50-19-145	հատ	16470
153	Երկժանանիվի առանցքակալի փակաղակ	50-19-156	հատ	6000
154	Երկժանանիվի միջուկի առանցքակալ	213	հատ	4600
155	Երկժանանիվի առանցքակալ	70-32417Մ	հատ	54810
156	Երկժանանիվի առանցքակալ	70-32612Կ	հատ	22000
157	Երկժանանիվ	20-19-24	հատ	180000
158	Երկժանանիվի առանցքակալի պատյան	24-19-38	հատ	13300
159	Երկժանանիվի առանցքակալ	70-42612Կ	հատ	16400
160	Երկժանանիվի առանցքակալ	70-42415ԿՄ	հատ	31600
161	Թրթուրի հավաքակազմ (1 կողմը)	ՉԴ-50-22-9ՍԲ	լրկզմ	2400000
162	Թրթուր	50-22-2	հատ	38000
163	Թրթուրի հեղյուս և մանեկ	Մ20x1,5x62/30326-1	լրկզմ	1500
164	Թրթուրի ձգման մեխանիզմ	50-21-420ՍՊ	հատ	81000
165	Թրթուրի ձգման մեխանիզմի փական	50-21-177ՍՊ	հատ	9000
166	Գլդոն երկկողապատ	24-21-170ՍՊ	հատ	190000
167	Գլդոն միակողապատ	24-21-169ՍՊ	հատ	190000
168	Օժանդակիչ գլդոն	50-21-416ՍՊ	հատ	145000
169	Օժանդակիչ գլդոն	24-21-171ՍՊ	հատ	145000
170	Ձգիչ անիվ (ձախ)	50-21-305-05ՍՊ	լրկզմ	490000
171	Ձգիչ անիվ (աջ)	50-21-306-05ՍՊ	լրկզմ	490000

172	Ձգիչ անիվ	24-21-146ՍՊ	լրկզմ	460000
173	Թերթիկավոր զսպան	50-20-103ՍՊ	հատ	360000
174	Հենակային զսպան	50-20-125ՍՊ	հատ	370000
175	Հարթաշերեփ	80-52-19-06ՍՊ	լրկզմ	5100000
176	Կողային դանակ (ձախ)	80-52-111-02	հատ	42000
177	Կողային դանակ (աջ)	80-52-112-02	հատ	42000
178	Միջնամասի դանակ	70-52-13	հատ	110000
179	Միջնամասի դանակի հեղյուս և մանեկ	700-28-2492,3013 (Մ-24)	լրկզմ	1000
180	Կողային դանակի հեղյուս և մանեկ	700-28-2517,3015 (Մ-27)	լրկզմ	1000
181	Հարթաշերեփի հիդրոգլան	131-26-108-02ՍՊ	հատ	690000
182	Հարթաշերեփի հիդրոգլան	50-26-570ՍՊ	հատ	550000
183	Հարթաշերեփի շեղածման հիդրոգլան	50-50-221ՍՊ	հատ	750000
184	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 131-26-108-02	լրկզմ	6800
185	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 50-26-570	լրկզմ	6700
186	Շեղածման հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 50-50-226	լրկզմ	15000
187	Փխրեցուցիչի կանգնակ	50-50-104ՍՊ	լրկզմ	460000
188	Փխրեցուցիչի հիդրոգլանի նորոգման լրակազմ	Ռ/Կ 50-50-225	լրկզմ	15000
189	Խցիկի ապակիներ	50-59-77-11ՍՊ խցիկի (9հատ)	լրկզմ	380000
190	Խցիկի ապակիներ	24-59-5ՍՊ խցիկի (9հատ)	լրկզմ	380000
191	Նստարան	50-23-200ՍՊ	լրկզմ	182700
192	Մոտոժամի ցուցիչ	16-72-1ՍՊ	հատ	37550
193	Մոտոժամի ցուցիչ	ՏԽԱ 3,1-11ՌԻՎՊ,45 3813 001-11	հատ	36960
194	Վառելիքի զտիչ (ՅԱՄԶ)	1117	հատ	2500
195	Յուղի զտիչ (ՅԱՄԶ)	5103	հատ	15000
Ընդամենը՝ միավորի գների հանրագումարը				38826190

- 2021թ. ընթացքում նշված ցանկից ձեռք է բերվելու առավելագույնը 86000000 դրամի պահեստամասեր,

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռեմարկ» ՍՊԸ
տնօրեն

«ՌԵՄԱՐԿ»
"REMARK"
Ռ. ԲԱԼԱՅԵՎՅԱՆ
01261033

Հավելված N 2
N ՀԲՄԱՊՁԲ-21-20/3-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝
			4-րդ եռամսյակ
1	Զանազան պահեստամասեր (Միջին արտադրողականության բուլդոզերների ի վերանորոգման պահեստամասեր)	34911150/2	86000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռեմարկ» ՍՊԸ
տնօրեն

Դ. ԹՈՐՈՍՅԵԼՅԱՆ

Հավելված N 3
N ՀԲՄԱՊՁԲ-21-20/3-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀԲՄԱՊՁԲ-21-20/3-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն